



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Մամուլի հաղորդագրություն

11. 12. 2020 թ.

## Հանգանակված 4,5 միլիոն դոլարով ՔՈԱՖ-ը սարեր է շարժում՝ հանուն Հայաստանի գյուղերի և այստեղ ապաստանած արցախցիների

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ-ԵՐԵՎԱՆ - «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (**ՔՈԱՖ**) «Շուռ տանք սարերը» առցանց հեռարձակվող դրամահավաքի ընթացքում հանգանակվել է ավելի քան **\$4.5 միլիոն գումար**: Դեկտեմբերի 6-ի միջոցառումը փոխարինում էր ՔՈԱՖ-ի ամենամյա գալա երեկոյին, որն ավանդաբար անցկացվում էր Նյու Յորքում:

Գումարը ծառայելու է Հայաստանի 64 գյուղերում կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական հրատապ ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև Լոռու մարզում գերժամանակակից ՍՍԱՐԹ կենտրոնի գործունեությանը: Հավաքված գումարն օգտագործվելու է նաև Արցախից տեղահանված և ՔՈԱՖ-ի շահառու համայնքներում ապաստանած ընտանիքների համար տիպարային տների կառուցման համար:

ՔՈԱՖ-ի հիմնադիր և տնօրենների խորհրդի ատենապետ դոկտոր **Կարո Արմենն** իր ուղերձում ընդգծեց Հայաստանում ստեղծված ճգնաժամի պայմաններում ՔՈԱՖ-ի առաքելությունը հրատապ խնդիրներին ծառայեցնելու անհրաժեշտությունը. «Ճգնաժամի կառավարումը ՔՈԱՖ-ի ԴՆԹ-ն է: Այսօր էլ նման հրամայականի առջև ենք կանգնած. Արցախից տեղահանված 40,000 հայ մնացել է անտուն: Խնդիրը լուծելու համար մենք պետք է նախորդ տարի հավաքագրված 6 միլիոն դոլարի նշածողն այս տարի բարձրացնենք 20 միլիոն դոլարի: Պետք է կացարաններով ապահովենք մարդկանց, որ խուսափենք 1988 թ. երկրաշարժից հետո վազոն-տնակներում տասնամյակներով ապրողների ճակատագրից»:

Արդեն երկու տասնամյակ է՝ ՔՈԱՖ-ը Հայաստանի գյուղերի զարգացման առաջամարտիկն է, այժմ էլ հանձն է առել փոքր-ինչ թոթափելու Արցախի վրա հարձակման հետևանքով մարդկանց առջև ծառայած խնդիրների բեռը: ՔՈԱՖ-ը նախատեսում է ժամանակավոր կացարանով ապահովել ու իր ծրագրերի մեջ ներգրավել շուրջ 2000 փախստականի: Ժամանակավոր կացարաններով ապահովելուց հետո ՔՈԱՖ-ը ձեռնամուխ կլինի մշտական բնակարանով ապահովելու նրանց, ովքեր չեն կարող վերադառնալ Արցախ: Այդ մարդկանց համար հասանելի են լինելու ՔՈԱՖ-ի կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրերը:



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

«Շուռ տանք սարերը» դրամահավաք-միջոցառումը հեռարձակվել է ԱՄՆ-ի **USArmenia** և **ARTN** հեռուստաընկերությունների արբանյակային ալիքներով: Այն վարում էին Լոս Անջելեսի FOX 11 հեռուստաընկերության մեկնաբան և հաղորդավար **Արաքսյա Կարապետյանը** և ՔՈԱՖ-ի Ջարգացման գծով տնօրեն **Հայկ Բոյաջյանը** և համաշխարհային հռչակ վայելող աճուրդավար **Գաբրիել Բուտուն**:

Երաժշտական ելույթներով ողջունեցին երգչուհի **Իվետա Մուկուչյանը** և ջութակահար **Արա Մալիքյանը` դաշնակահար Սերուժ Գրաճյանի** նվագակցությամբ: Դա հարգանքի տուրք էր ՔՈԱՖ-ի համայնքների հերոս զինվորներին, ովքեր արցախյան 44-օրյա պատերազմում կյանքը նվիրաբերել են հայրենիքի պաշտպանությանը: Ջութակի և թավջութակի դուետով հանդես եկան նաև հայաստանցի **Վիկտորյա և Լիանա Ուլիխանյանները**, վոկալային կատարումն էլ ֆրանսաբնակ **Հակոբ Ղասաբյանին** էր:

Հատուկ ուղերձով հանդես եկան դերասաններ **Անդրեա Մարտինը, Վիկտոր Գարբերը, Շոն Հեյսը, Յուջին Լևին, Դանիել Լևին, Թինա Ֆեյը, Մարկ Գերագոսը, Հովիկ Կեուչկերյանը, Լորի Թաթույանը, Քեն Ղավիթյանը**, երաժիշտ **Սերժ Թանկյանը**, կատակերգուներ **Մարի Բասմաջյանը, Կև Օրկիյանը, դ-ր Էրիկ Իսրայելյանը**, Կալիֆոռնիայի նահանգային խորհրդարանական **Ադրին Նազարյանը**:

«Շուռ տանք սարերը» դրամահավաք-միջոցառման տեսագրությունը հասանելի է [www.coafgives.org](http://www.coafgives.org) կայքում: Հորդորում ենք աշխարհասփյուռ հայերին դիտել ու խորությամբ ճանաչել ՔՈԱՖ-ի աշխատանքը: Կազմակերպության նպատակն է հավաքել 5 միլիոն դոլար մինչև տարեվերջ, իսկ 2021 թ. կեսերին գումարը հասցնել 20 միլիոն դոլարի:

### **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած` ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական` ՍՄԱԲԹ նախաձեռնություն: ՍՄԱԲԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը  
կղառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ  
մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում.  
բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: